

772

Այլին.

Կոմիտի թագիւհուրը

Թիֆլիս  
1899.

85  
Ա-52

Հայոց Մայուս քահանա՞ն

ԷՊԹՈՒԳՈ ԳԵ-ԲՐԻՉԻՍ

291

ՓՈՔՐԻԿ

ԹՄԲԿԱՀԱՐԸ

Զ  
27.2003  
Զբանական

ԹԻՖԼԻՍ

6102

855.

Ա-52

ար

ԷՊՐՈՎԴՈ ԳԵ-ԱՄԻԶԻՍ

# ՓՈՔՐԻԿ

# ԹՄԲԿԱՀԱՐԾ

1002  
3  
4  
9



Ց. Կ. ՄԱՐՏԻՐՈՍԻԱՆЦ. Տիպ. Կ. ՄԱՐՏԻՐՈՍԻԱՆЦ.

Օբելյանովսկայ պող., դ. № 1/2.

1899

ԹԱԳԱՅՈՒԹ  
ԳՈԼԸ ԱՐԴՅՈՒՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 10 Августа 1899 года.



## ՓՈՔԻԿ ԹՄԲԿԱՀԱՐԾ

1847 թուին էր, երբ Խտալացիները պատերազմում էին Աւտորիացիների դէմ:

Խտալական հետևակ զօրքի մի վաշտ ուղարկուած էր զրաւելու բարձրաւանդակի վրայ կանգնած միայնակ սունը: Ճանապարհին պատահեցին աստրիական երկու գումարտակ, որոնք սկսեցին Խտալացիների վրայ հրացան արձակել: Խտալացիները հազիւհազ կարողացան համնել այդ առանձնացած տանը ու պատսպարուիլ այնտեղ, թողնելով դաշտի վրայ մի քանի սպանուած և վիրաւոր ընկերներ: Զինուորները, դռները մի կերպ ամրացնելով, վաղեցին ներքին յարկի պատուհանների մօտ և սկսեցին սաստիկ հուր տեղալ յարձակուողների վրայ: Աւտորիացիները կիսաշրջան կազմեցին ու կամացուկ սկսեցին առաջ գալ: Խտալական վաշտի հրամանատարներն էին երկու երիտասարդ սպաներ և մի ալեոր, բարձրահասակ, նիհար, խստաբարոյ գնդապետ: Սրա թմբկահարը՝ թխադէմ, ոււաչեայ տասնեւչորս տարեկան մի պատանի էր: Առաջի յարկի սենետակից գնդապետը

կորուկ Հրամաններ էր արձակում. նրա դաժան գէմքի վրայ բազման ոչ մի նշան չէր երևում:

Փոքրիկ թմբկահարը, սակաւ ինչ գունատուած, վիզն երկարացնելով ու պատին լինուած, կանգնել էր սեղանի վերայ և նայում պատուհանից: Ծխի միջից երեւում էին Աւտրիացիների սպիտակ զգեստները:

Տունը գտնւում էր բարձր բլրի վրայ. վհի կողմը, տանիքի տակ մի փոքրիկ պատուհան կար - այս կողմից Աւտրիացիները չէին կալազ վնաս Հասցնել. նոցա կրակի առջև բաց էին մնում միմեան տան ճակատն ու կողմնակի պատերը: Գնդակների կարկուտը սուրալով ու ճարճթերով ծակում էին պատերը, կտոր կտոր անում կարասիքը, դռներն ու պատուհանները. աստմկիների փշրանքը, փայտի կտորները, գաճը անդագար վալը էին թափում: Պատուհանների մօտ մերթ մէկը, մերթ միւսը զինուարներից զլորուում էր. սրանց մի կողմն էին քաշում: Ումանք էլ իրենց վէրքերը բռնելով թափալում էին սենեակներում. խոհանոցում ընկած էր ջախջախուած զիսով մի զիտկ: Յանկարծ թշնամիների կիսաշրջանը սեղմուեցաւ աւելի խիստ ու զրու տուեց զէպ առաջ: Գնդապետը, որ մինչև այդ րոպէն սառնասիրու էր, մի անհանդիստ շարժում արաւ ու մեծ քաղերով դուրս եկաւ սենեակից: Նրան իստեւց լիսնապետը: Երեք րոպէից լիսնապետը վազէվազ լիստ դարձաւ ու նշանով կամչեց թմբկահա-

րին: Պատանին արագօրէն բարձրացաւ ոճուքը: Այնտեղ պատուհանի մօտ կանգնած գնդապետը մատերով ինչ որ բան էր զրում մի կտոր թղթի վրայ: Յատակի վրայ նրա ոտների տակ ընկած էր ջրհորի պարանը:

Գնդապետը, ծալերով տոմսակը, ուևեռեց պատանու վրայ իւր գորշադոյն սառն աչքերը, որոնցից բոլոր զինուորները միշտ զողողորում էին:

— Թմբկահար:

Թմբկահարը զիսարկին մօտեցրեց իւր աջը: — Ապա, մեզ մի ծառայութիւն արա. կարող ես... Պատանու աչքերը փայլեցին.

— Կարող եմ, պարմն գնդապետ:

— Նայիր — (գնդապետը ցոյց տուաւ պատուհանից զուրս). տեսնամ, ես հովտում, Վելլաֆրանկակի մօտ սուիներ են պալլում. այդ մերանք են: Առ այս տոմսակը, բռնիր պարանի ծայրը, իջիր պատուհանով ու վազիր գաշտի միջով մերոնց մօտ և տոմսակը լանձնիր հենց առաջին պատահող սպալին: Հանիր գոտիդ ու պայտասակի:

Թմբկահարը հանեց գոտին ու պայտասակն և տոմսակը թափցրեց ծոցի գրաբանում: Յիսնապետը պարանը վալը ձգեց պատուհանից և բռնեց երկու ձեռքով նրա մի ծայրը: Գնդապետը օդնեց պատանուն զուրս գալ պատուհանով, մէջքը հովտին գարձրած:

— Միտքդ պահիր. ամբողջ խմբի փրկութիւնը

կախուած է ալժմ քո քաջութիւնից ու ստների արագութիւնից:

—Վստահ եղէք, պարոն գնդապետ, պատասխանեց տղան վայր իջնելով:

—Դաշտի միջով վազելիս, կռացիր, աւելացրեց գնդապետը, ինքն էլ պարանի ծալրից բռնելով:

—Հանդիստ եղէք:

—Տէր ընդ քեզ:

Մի րոպէից թմբկահարը ոտք դրաւ գետին. յիսնապետն յետ քաշեց պարանն ու հեռացաւ: Գլնդապետը շտապով գլուխը հանեց պատուհանից. երեխան վազելով իջնում էր բլրից: Գնդապետն արդէն հաւատացած էր, որ փախուստը յաջողուեց: Բայց յանկարծ երեխայի առաջից ու յետևից փոշու փոքրիկ քուլաներ բարձրացան: Աւստրիացիները նկատել էին վազողին: Փոշու այդ քուլաներն ու ամպիկները պատանու վրայ արձակած գնդակներից էին, որոնք ընկնում էին գետին ու փորում հողը: Բայց երեխան վրազ փախցում էր: Յանկարծ նա օրօրուեց ու ընկաւ:

—Սպանեցին—գուաց գնդապետը, բայց թմբկահարը կրկին ոտքի ելաւ:

—Ա՛հ, նա միայն վայր էր ընկել:

Գնդապետը աղատ շունչ քաշեց: Յիրաւի, թմբկահարը շարունակում էր բոլոր ոյժով վազել, բայց կաղում էր:

—Ուն է ցաւացրել, մտածեց գնդապետը: Փռու մի քանի ամպիկներ կրկին և կրկին բարձրա-

ցան, բայց երեխան սրդէն հեռու էր. նա ապահով էր որևէ է վտանգից: Գնդապետը ուրախ էր, բայց շարունակում դեռ յուզուած նայել:

Այժմ, երբ տղան ազատ էր թշնամու գնդակներից, ամեն ինչ կախուած էր ժամանակից: Եթէ տղան իւր ժամանակին չկարողանայ իմաց տալ մերայնոց, որոնք կանդնած են հովտում, եթէ իսկոյն և եթ օգնութիւն չգալ, ամբողջ վաշտը կըկոտորուի և ինքը գնդապետն էլ գերի կառնուի:

Պատանին մերթ վազում էր շտապ, մերթ դանդաղեցնում քայլերը, կաղում. երբեմն էլ սայթաքւում էր, կանգ առնում:

—Երեւի վիրաւորուած է՝ սարսափով մտածեց գնդապետը և ուշի գիտում էր տղավի բոլոր շարժումները, ոիբար էր տալիս, կանչում, կարծես նա կարող էր լսել:

Տեսդայն անհանգտութեամբ նա ամեն մի բոպէ աչքերով չափում էր պատանու և այն սուխներու միջև եղած տարածութիւնն, որոնք արեւի լոյսից պապղում էին զարու արտում:

Իսկ ներքեւ, սենեակներում հնչում էին սպաների հրամանները. շւացնելով ու ճայնթելով թռչում էին գնդակներ. լսում էր վիրաւորների մղկտավի հառաչանքը, ջախջախուող կարասիքի, թափուող գաճի ու ծեփի դղրդոց...

—Առաջ, մի վհատուիր—կանչում էր պատու-

Հանից գնդապետը. առաջ, վաղիք... ահ անիծածը կանգնեց: Զէ, էլի վաղեց...

Ճնշասպառ ներս մտաւ մի սպայ և յայտնեց, թէ թշնամին, շարունակելով կրակ տեղալ, բարձրացրել է սպիտակ դրօշակ և առաջարկում է անձնատուր լինել:

— Չպատասխանել նորան—դոռաց գնդապետը, աչքերը չեւացնելով պատանոց, որը շատ հեռու էր, բաց կարծես արդէն դժուարութեամբ էր շարժում:

— Դէհ վաղիք, թռիր—գտողուում էր գնդապետը ասումները կրծտացնելով. մեռիք, անպիտան, բաց վաղիք: ԱՇ, ստորաքարշ. ախ վախիկոտ... նա հանդստանում է, նա նաոնէլ է...

Տղայի գլուխը դեռ ևս նշմարւում էր հասկերի միջից և յանկարծ չքացաւ, մի բոպէից կրկին երեւաց և նորից անկետացաւ... Գնդապետն այլևս նըրան չէր տեսնում... նա վար իջաւ: Գնդակները թուշկոտում էին սուրալով: Ոենեակները լցուել էին վիրաւորներով, որոնցից մի քանիսը օրորուելով դեռ կարողանում էին կանգնել. պատերն ու յատակը շաղախուած էին արիւնով, գոների մօտ թափուած էին դիակների կոյտեր: Գնդապետի օդնականի թեր ջախչախուել էր գնդակից. թանձր ծուխը պատել էր ամեն ինչ:

— Համարձակ, մի վհատիք, պինդ կացէք, շուտով օդութիւն կըհասնի մեզ:

Աւտրիացիներն արդէն բաւականին մօտեցել էին պաշարուած տանը. ծխի միջից կարելի էր նըշմարել նոցա դէմքերը: Անընդհատ հրացանաձգութեան մէջ լսում էին նոցա վայրենի հայհոյանքները: Նոքա պահանջում էին անձնատուր լինել, մահ էին սպառնում: Մի քանի զինուորներ ահ ու սարսափով վախան պատուհաններից—լիսնապետները կրկին յետ էին քշում նոցա: Ամենքին լուսահատութիւն տիրեց, այլևս հնարաւորութիւն չկար պաշտպանուելու: Յանկարծ Աւտրիացիները գագարեցրին հրացանաձգութիւնը: Լսուեց բարձրաձայն՝ նախ գերմաններէն և ապա խոլերէն.

— Անձնատուր եղէք:

— Ո՛չ. կատաղի ուռնուաց գնդապետը պատուհանից. հրացանաձգութիւնը կրկին սկսուեց: Խտալացիները միմեանց յետեւից ընկնում էին: Ջատ պատուհաններ արդէն զորկ էին պաշտպանութիւնից: Օրհասական վարկեանը մօտենում էր: Գնդապետն աղացուած ահուելի դէմքով արս ու այն կողմն էր ընկնում ու բարբանջում:

— Զէն գալիս. Տէր Աստուած: Արդեօք շուտով: Յանկարծ լիսնապետը աղաղակեց ոճոռքից:

— Մերոնք, մերոնք զալիս են...

— Գալիս—ուրախ բացականչեց գնդապետը:

Թէ առողջ և թէ վիրաւոր, լիսնապետները, ալանները—բոլորեքեան դէպի պատուհանները վազեցին: Կռիւը սկսուեց նոր ոլժերով և աւելի կատաղի:

Յանկարծ թշնամու շարքերում խառնաշփոթութիւն ընկաւ։ Գնդապետը շուտափոյթ ժողովեց ներքին յարկում գտնուած իւր զինուորներին և ուզում էր սովորներսվ յարձակումն գործել Աւտրիացիների վրայ...

Լսուեց ձիերի տրափիւն, ահարկու ուրան... Դիսի միջից երևաց իտալական մի գունդ, որ մերկ սուրերով հարուած հարուածի յետևից էր թափում Աւտրիացիների գլխին։ Գնդապետն էլ իւր վաշտով գուրս եկաւ նոյա ընդառաջ։ Ակսուեց կատաղի կուիւ։ Աւտրիացիները սարսեցին, խառնուեցին ու սկսեցին վախուստի դիմել։

Պաշարուած տունն ազատած էր։ Խտալական հետևակ զօրքի երկու վաշտ երկու թնդանօթով գրաւեց այդ բարձրաւանդակը։ Գնդապետը թեթև միրաւորուած էր ձեռքից և մնացած զինուորներով միացաւ իւր գնդին։ Օրը վերջացաւ Խտալացիների յաղթութեամբ։ Բայց միւս օրը, չնայած վերջինների հերոսական ընդիմադրութեանը, պարտութիւն կրեցին Աւտրիացիներից, որոնք ժուռով գերազանց էին։

Երկու օրից յետոյ մեր զօրքը տիսուր տրտում յետ էր նահանջում։ Գնդապետը թէւ վիրաւորուած էր, բայց ամբողջ ճանապարհը ոտքով էր գնում իւր վաստակած, լուռ զինուորների հետ։ Երեկոյեան դէմ հասան Գօյտօ։ Գնդապետն իսկոյն և եթ սկսեց որոնել իւր վիրաւոր օգնականին, որին շարժական հի-

ւանդանոցի հետ նախօրոք փոխադրած պէտք է լինէին արտեղ։

Հիւանդանոցը ժամանակաւորապէս տեղաւորած էր եկեղեցու մէջ։ Գնդապետին ցոյց տուին տեղը. նա մտաւ։ Եկեղեցին լի էր վիրաւորներով, որոնք պարկած էին և՝ անկողիների, և՝ յատակի վրայ։ Երեկու բժիշկ իրենց օգնականներով լրութեամբ զբաղուած էին հիւանդների մօտ։ Լսում էին հառաջանք և խուլ տնքոցներ։ Գնդապետը կանգնեց զրան մօտ և աչքերով վինտրում էր իւր օգնականին։ Յանկարծ նրա ականջին հնչեց ում որ իրպոտ ձայնը.

— Պարո՞ն գնդապետ։

Գնդապետը շուռ եկաւ. այդ կանչողը—վոքրիկ թմբկահարն էր։ Տղան պարկած էր անկողնում, դալկացած, դեղնած ու նիշար, բայց աչքերը փալում էին ալմազի նման։

— Թու այսուեղ ես—զարմացած հարցրեց զընդապետը։ Ապրիս, քաջ. դու լաւ կատարեցիր պարտք։

— Ինչ կարող էի, կատարեցի—պատասխանեց թմբկահարը։

— Քեզ վէրք են հասցրել—հարցրեց զնդապետը, շարունակելով աչք ածել մօտակայ մահճակալներին, իւր օգնականը գտնելու լուսով։

— Ի՞նչ արած—ասաց տղան, որին ստացած վէրքը սիրտ էր տալիս խօսելու իւր հրամանատարի

Հետ, որի առաջ ուրիշ անգամ նա չէր համարձակուի բերան բանալ:—Ես վազում էի, որքան կարող էի, կրամաւմ էի, բայց նոքա ինձ այնուամենայնիւ նկատեցին: Եթէ ես վիրաւորուած ըլինէի շուրջէով առաջ կըհասնէի: Մահու չափ տանջում էր ինձ ծարաւը: Ես վախենում էի ուշանալ. ես բարկութիւնից, ուշից լաց էի լինում. ես կարծում էի, թէ դանդաղ եմ շարժում, իսկ ամեն մի լուպէն մերոնցից նորանոր գոհեր էր տանելու... Ես արի այն, ինչ որ կարողացաւ: Ես բաւական եմ... Բայց թող տուէք, պ. գնդապետ, ձեր մատների վրայ արին է երևում:

Յիրաւի գնդապետի վէրքը վաս էր կապուած և մի քանի կաթիլ արիւն էր ծորում ձեռքի վրայ: —Թող տուէք, պարոն գնդապետ, ես ամուր կրկապեմ. մի վարկեանում կանեմ:

Գնդապետը պարզեց ձախ ձեռքը, իսկ աջով օգնում էր պատասխուն քանդել վէրքի կապը. բայց տղան բարձրանալով բարձից, գեղնեց ու թուլացած ընկաւ:

—Բաւական է, թող—ասաց գնդապետը, նայելով նրա վերալ ու խելալ իւր ձեռքը, որ բոնել էր թմբկահարը: Լաւ է, զու քո ցափն դարման արա. վէրքը, մինչև անգամ թոքերը, եթէ լաւ չը խնամես, կարող են սառտիկ վասանալ:

Թմբկահարը շարժեց գլուխը: Գնդապետը ուշից նայեց նորա վերայ:

— Երեխ գուշատ արիւն ես կորցրել, եթէ այդքան թող ես:

— Ճատ արիւն... պատասխանեց պատանին ժպտալով: Ո՛չ մի կաթիլ... նայեցէք... Կա մի կողմը քաշեց վերմակը: Գնդապետը արսափահար յետ մղուեց: Տղակի ձախ ոտք կտրած էր, այլանդակ կոճղը վաթաթուած էր արիւնոտ վալասներով... Այդ միջոցին անցնում էր հաստլիկ, կարճահասակ բժիշկը:

— Ա՛, պարօն գնդապետ—արտասանեց նա շտապ և ցոյց տուեց պատանու վրայ. այ քեզ դրժագութիւն. չէ՞ որ կարելի էր սրա ոտքը վրկել, եթէ նա իւր վէրքերը այնքան ասսովկ գրգռած չլինէր: Անիծեալ բորբոքումն... ճար չկար, հարկ եղաւ ոտքը կտրել... Ո՛՛, բայց տղան շատ կտրիմն է, հաւատացնում եմ ձեզ: Ո՛չ մի ճախն չհանեց, ոչ մի կաթիլ արտասուք չթափեց: Պէտք է հպարտանալ. ահա թէ ինչպիսի հերասներ են մեր խտալիալի որդիքը. աղնիւ խօսք եմ ասում քաջարի ժողովուրդ ենք:

Բժիշկը գլուխ տուեց ու արագ հեռացաւ: Գլնդապետը մուալուեց, ծածկեց պատանուն վերմակով և երկար ու շեշտակի նայում էր նորա վերայ: Այնուհետև կամացուկ, աչքերը չհեռացնելով տղալից, կարծես մեքենաբար աջը մօտեցրեց զիսին և հանեց զիսարկը:

—Պարոն գնդապետ, ի՞նչ էք անում — բացա-  
գանձեց ապշած հիւանդը. պարոն գնդապետ, իմ ա-  
ռաջ...

—Ես գնդապետ եմ, իսկ դու հերոս — քնքշու-  
թեամբ պատասխանեց այդ խստաբարոյ մարդը, որից  
զինուորները, երբէք մի քաղցը խօսք չէին լսել և  
խօնարհելով դէպի իւր փոքրիկ թմբկահարը, երեք  
անդամ համբուրեց նորան:



772

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. ԵԺ-ԼՈՒՍԱԴԵՄԵՆ, ՎԵԱ . . . . . 1 ր. —
2. " Ուսկովներ, ՎԵԱ . . . . . — 35 հ.
3. ԺԻՎՈՍՊԱԼԿԻ-ՏԱՐՈՒԹՅԵՆ ԵՎ ՕՐ՝ ԱՎԱՆԻ, (ԱԱԼԱՎԱԹ) — 12 հ.
4. ԷԼԻՋԱ ՕՐԺԵՇԿՈ-ԳԻՎԱՎԱՆԻ ՎԻԱՄՈՐԱԲԱՆԸ (ԱԱԼԱՎԱՆ) — 20 հ.
5. ԲԵՐՆՇտԵՆ-ԺԱՂԲԻ ԵՎ ԱՎՈՎԻ, ԱՎԱՄԼԵՐՆԵՐՈՎ . . — 8 հ.
6. ԺԻՎՈՍՊԱԼԿԻ-ՄԱՇՐԵԼ ԵՎ ԺԻՇԱ, ԱՎԱՄԼԵՐՆԵՐՈՎ . . — 10 հ.
7. ԷԼԻՋԱ ՕՐԺԵՇԿՈ-ԿԱԽԱՐԵՎ . . . . . — 15 հ.
8. Ս. Ք.-ԲԵՐԿԻ ԿԵԱՆՐԸ, ԱՎԱՄԼԵՐՆԵՐՈՎ . . . . . — 8 հ.
9. ԲԺ. ԲՈՒՂՈՂԵԱՆ-ԱՌՈՂՋԱՎԱՆԱԼԱՆ ԳՐՈՒԺՆԵՐ . . . . . — 5 հ.
10. ԿԱՐՃԵՆ ՄԻԾՎԱ-ՄԱՅՐԱՎԱՆ ԱԵՐ . . . . . — 2 հ.
11. ԷՄԻԼ ԶՈԼԱ-ԵՐԿՈՒ ման, 1899 . . . . . — 5 հ.
12. ԷՂԹԵՆԴՐ ԴԵ-ԱՄԵԽԻԱ-ՓՈՐԲԻԿ ԹՄԵԼԿԱՆԱՐԸ, 1899 . . — 3 հ.

ԽԱՄԲՈՒՐԻ 82Կ Է

Ամպօվ-Լճի տակ, ՎԵԱ բողարավան կեանրից, 2 հասոր.

Դիմել ԹԻՖԱՆԻ ԿԵՆԴՐԱՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՅՐԱԿԱՆՈՒՅՆ:

ԳԻՒՆ Ձ կուլ.

0004793

2013



